ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՍՄ-ՄՀ-ԳՀ-ԱՊՁԲ-17/02-2

ք. Մեղրի «8» օգոստոսի 2017թ.

ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքը, ի դեմս համայնքի ղեկավար Մխիթար Զաքարյանի, որը գործում է օրենսդրության պահանջներին համապատասխան, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Վիլլա Գազ» ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Հայկ Հայրապետյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 8029600 (ութ միլիոն քսանինը հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը

կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 29-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ

համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Մեղրի համայնք	«Վիլլա Գազ» ՍՊԸ
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Մեղրի, Զ. Անդրանիկի 2	ՀՀ Սյունիքի մարզ, ք. Ագարակ, Չարենցի 26/24
Կենտրոնական գանձապետարան	Հայբիզնեսբանկ ՓԲԸ
Հ/Հ 900302200051	Հ/Հ 1150010831830100
ՀՎՀՀ 09425378	ՀՎՀՀ 09704975
Համայնքի ղեկավար՝ Մ. Զաքարյան	Տնօրեն՝ Հ. Հայրապետյան
----------	----------
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
« 8 » օգոստոսի 2017թ. կնքված
ՍՄ-ՄՀ-ԳՀԱՊՁԲ-17/02-2 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ապրանքի									ՀՀ դրամ		
									մատակարարման		
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը**
1	44141110	մետաղական խողովակ	Sepanta Marand Co. ԻԻՀ	Φ=165*3մմ	մ	8050	579600	72	Ք. Մեղրի, Զ. Անդրանիկ 2	72	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 31.08.2017թ
6	44141110	մետաղական խողովակ	Sepanta Marand Co. ԻԻՀ.	Φ=60*3մմ	մ	1950	702000	360	Ք. Մեղրի, Զ. Անդրանիկ 2	360	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 31.08.2017թ
7	44141110	մետաղական խողովակ	Sepanta Marand Co. ԻԻՀ	Φ=114*3մմ	մ	3500	6748000	1928	Ք. Մեղրի, Զ. Անդրանիկ 2	1928	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 31.08.2017թ

ԳՆՈՐԴ
Մեղրի համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Մեղրի, Զ. Անդրանիկի 2
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900302200051
ՀՎՀՀ 09425378
Համայնքի ղեկավար՝ Մ. Զաքարյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«Վիլլա Գազ» ՍՊԸ
ՀՀ Սյունիքի մարզ, ք. Ագարակ, Չարենցի 26/24
Հայբիզնեսբանկ ՓԲԸ
Հ/Հ 1150010831830100
ՀՎՀՀ 09704975
Տնօրեն՝ Հ.Հայրապետյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
« 8 » օգոստոսի 2017թ. կնքված
ՍՄ-ՄՀ-ԳՀԱՊՁԲ-17/02-2 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի								
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2017թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**					
			օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	44141110	մետաղական խողովակ	579600	579600	579600	579600	579600	579600
6	44141110	մետաղական խողովակ	702000	702000	702000	702000	702000	702000
7	44141110	մետաղական խողովակ	6748000	6748000	6748000	6748000	6748000	6748000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ԳՆՈՐԴ
Մեղրի համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Մեղրի, Զ. Անդրանիկի 2
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900302200051
ՀՎՀՀ 09425378
Համայնքի ղեկավար՝ Մ. Զաքարյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«Վիլլա Գազ» ՍՊԸ
ՀՀ Սյունիքի մարզ, ք. Ագարակ, Չարենցի 26/24
Հայբիզնեսբանկ ՓԲԸ
Հ/Հ 1150010831830100
ՀՎՀՀ 09704975
Տնօրեն՝ Հ. Հայրապետյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
Ի ԼՐՈՒՄՆ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ N ՍՄ-ՄՀ-ԳՀԱՊՁԲ-17/02-2 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

Ք. Մեղրի

<<28>> <<օգոստոս>> 2017թ.

ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքը, ի դեմս համայնքի ղեկավար Մխիթար Զաքարյանի, որը գործում է օրենսդրության պահանջներին համապատասխան (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Վիլլա Գազ>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Հայկ Հայրապետյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն համաձայնագրով կողմերը որոշեցին Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունը՝
1.1 Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված Տեխնիկական բնութագիր –գնման ժամանակացույցում ապրանքի մատակարարման ժամկետը ՝Պայմանագրի կնքման օրվանից մինչև 31.08.2017թ՝ արտահայտությունը փոխարինել ՝Պայմանագրի կնքման օրվանից մինչև 30.09.2017թ՝ արտահայտությամբ:

2. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է կողմերի միջև կնքված պայմանգրի անբաժանելի մասն:
2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:
2.3 Սույն համաձայնագիրը կնքված է հայերանով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
Մեղրի համայնք	«Վիլլա Գազ» ՍՊԸ
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Մեղրի, Զ. Անդրանիկի 2	ՀՀ Սյունիքի մարզ, ք. Ագարակ, Չարենցի 26/24
Կենտրոնական գանձապետարան	Հայբիզնեսբանկ ՓԲԸ
Հ/Հ 900302200051	Հ/Հ 1150010831830100
ՀՎՀՀ 09425378	ՀՎՀՀ 09704975
Համայնքի ղեկավար՝ Մ. Զաքարյան	Տնօրեն՝ Հ. Հայրապետյան
---------- (ստորագրություն)	---------- (ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Ապրանքների մատակարարման հարկային հաշիվ

U4988282829

[1] Դուրս գրման ամսաթիվ			Հարկային հաշիվ (ապրանքների մատակարարման)	[2] Սերիա	[3] Համար
30	Օգոստոս	2017 թ.		Ա	4988282829
[4] Մատակարարման ամսաթիվ					
30	Օգոստոս	2017 թ.	Կարգը (անհրաժեշտության դեպքում վանդակում նշել «X»)	հատուկ	

Ճշգրտվող հաշվի	
Սերիա	Համար
Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ	

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար	[7]	
			[8]	
			[9]	

[10] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

Մետաղական խողովակներ

Ապրանքներ մատակարարող (առաքող) անձի

[11] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0 9 7 0 4 9 7 5
[12] Անվանումը	«ՎԻԼԼԱ ԳԱԶ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)
[13] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	0 9 7 0 4 9 7 5 / 1
[14] Բանկային տվյալները	Հայբիզնեսբանկ ՓԲԸ N 1150010831830100
[15] Գտնվելու վայրը (հասցեն)	Ագարակ Չարենցի 26 24
[16] Վայրը, որտեղից ապրանքները մատակարարվում են	ՀՀ,ք.Ագարակ,Սահմանամերձ 11/2
[17] Լրացուցիչ տվյալներ	

Ապրանքներ ձեռք բերող անձի

[18] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0 9 4 2 5 3 7 8
[19] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀՀ իրավաբանական անձի հիմնարկ
[20] Բանկային տվյալները	ՀՀ ֆինանսների նախարարություն կենտ. գանձ. N 900305081177
[21] Գտնվելու վայրը (հասցեն)	ՄԵՂՐԻ Զ.ԱՆԴՐԱՆԻԿԻ 2
[22] Լրացուցիչ տվյալներ	
[23] Ում միջոցով	Անուն, ազգանուն
	Լիազորագիր: Համար
	Լիազորագիր: Ամսաթիվ
[24] Ապրանքների մատակարարման (առաքման) եղանակը	
[25] Մատակարարվող (առաքվող) ապրանքների նշանակման վայրը (հասցեն)	ՄԵՂՐԻ Զ.ԱՆԴՐԱՆԻԿԻ 2

[26] Մատակարարվող ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N	Ապրանքի անվանումը	Չափման միավորը	Քանակը	Միավորի գինը	Արժեքը	ԱԱՀ դրույքաչափը (%)	ԱԱՀ գումար	Ընդամենը	Այդ թվում՝ բնապ. վճար
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	Մետաղական խողովակ (6")	մ	72	6708.33	483000	20	96600	579600	0
2	Մետաղական խողովակ (2")	մ	360	1625	585000	20	117000	702000	0
3	Մետաղական խողովակ (4")	մ	428	2916.67	1248333.33	20	249666.67	1498000	0
Ընդամենը					2316333.33	X	463266.67	2779600	0

Դուրս գրող՝ HAYRAPETYAN HAYK 2001750080
անունը, ազգանունը

30/08/2017 16:38:49

*Ստացող՝ AVETISYAN ANNA 6010710464
անունը, ազգանունը

04/09/2017 11:27:06

Հավելված N 3
«8» օգոստոսի 2017թ. կնքված
ՍՄ-ՄՀ-ԳՀԱՊՁԲ-17/02-2 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ
«Վիլլա Գազ» ՍՊԸ
ՀՀ Սյունիքի մարզ, ք. Ագարակ, Չարենցի 26/24
Հայբիզնեսբանկ ՓԲԸ
Հ/Հ 1150010831830100
ՀՎՀՀ 09704975

Պատվիրատու
Մեղրի համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Մեղրի, Զ. Անդրանիկի 2
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900302200051
ՀՎՀՀ 09425378

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«8» «սեպտեմբեր» 2017թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ Մեղրի համայնքի կարիքների համար ապրանքների մատակարարման պայմանագիր
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «8» «օգոստոս» 2017 թ.
Պայմանագրի համարը՝ ՍՄ-ՄՀ-ԳՀԱՊՁԲ-17/02-2
Պատվիրատուն՝ ի դեմս համայնքի ղեկավար Մ. Զաքարյանի և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս տնօրեն Հ. Հայրապետյանի, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «8» «սեպտեմբեր» 2017 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N 1 եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		
1	մետաղական խողովակ	Φ=165*3մմ	72	72	31.08.2017	30.08.2017	579.6	սեպտեմբեր
2	մետաղական խողովակ	Φ=60*3մմ	360	360	31.08.2017	30.08.2017	702.0	սեպտեմբեր
3	մետաղական խողովակ	Φ=114*3մմ	1928	428	31.08.2017	30.08.2017	1498.0	սեպտեմբեր
	Ընդամենը						2779.6	

Վերոհիշյալ մատակարարումների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց
ստորագրություն
Հ. Հայրապետյան
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ապրանքն ընդունեց
ստորագրություն
Մ. Զաքարյան
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 3.1
«8» օգոստոսի 2017թ. կնքված
ՍՄ-ՄՀ-ԳՀԱՊՁԲ-17/02-2 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N 1
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ Մեղրիի համայնքապետարանի-ի (այսուհետ՝ Գնորդ) և «Վիլլա Գազ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 2017թ. Օգոստոսի 8-ին կնքված N ՍՄ-ՄՀ-ԳՀԱՇՁԲ-17/02-2 պայմանագրի շրջանակներում Վաճառողը 2017թ. սեպտեմբերի 8-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)
մետաղական խողովակ Φ=165*3մմ	մ	72
մետաղական խողովակ Φ=60*3մմ	մ	360
մետաղական խողովակ Φ=114*3մմ	մ	428

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

Հ. Հայրապետյան
ազգանուն, անուն

Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

Ա. Արզումանյան
ազգանուն, անուն

ստորագրություն

Վճարմ. հանձնարարական 170911054946030 - 629 Տպված 25/09/17 12:03:19
Բանկ << ֆինանսների նախարարություն "Client-Treasury" համակարգով
Ամսաթիվ 11/09/17 (7715)

Վճարողի հաշիվ	900302200051	Գումարը
Բանկի անվանումը	AM90030 Մեղրիի տեղական գանձ. բաժանմունք	2,779,600.00 AMD
Անունը կամ անվանումը	Մեղրու համայնք Մեղրիի Արտաքին լուս ավ. ցանցի հիմնա	
Հարկային կոդ		
Ստացողի հաշիվ	1150010831830100	2,779,600.00 AMD
Ստացողի բանկը	AM11500 «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ	
Ստացող	«ՎԻԼԼԱ ԳԱԶ» ՍՊԸ	
Գումարը տառերով	Երկու միլիոն յոթ հարյուր յոթանասունինը հազար վեց հարյուր AMD 00	
Նպատակը	Նյութերի ձեռքբերում h/h Ա498828282 9	
Ստորագրություն 1	Ստորագրություն 2	

Entered : Confirmed

Հոդված	Գումարը
4269	2,779,600.00

Ապրանքների մատակարարման հարկային հաշիվ A1168454545

[1] Դուրս գրման ամսաթիվ			Հարկային հաշիվ (ապրանքների մատակարարման)	[2] Սերիա	[3] Համար
26	Սեպտեմբեր	2017 թ.		A	1168454545
[4] Մատակարարման ամսաթիվ					
26	Սեպտեմբեր	2017 թ.	Կարգը (անհրաժեշտության դեպքում վանդակում նշել «X»)	հատուկ	Ճշգրտվող հաշվի
					Սերիա / Համար
					Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար	[7]	
			[8]	
			[9]	

[10] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

Մետաղական խողովակներ

Ապրանքներ մատակարարող (առաքող) անձի

[11] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0 9 7 0 4 9 7 5
[12] Անվանումը	«ՎԻԼԼԱ ԳԱԶ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)
[13] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	0 9 7 0 4 9 7 5 / 1
[14] Բանկային տվյալները	Հայբիզնեսբանկ ՓԲԸ N 1150010831830100
[15] Գտնվելու վայրը (հասցեն)	Ագարակ Չարենցի 26 24
[16] Վայրը, որտեղից ապրանքները մատակարարվում են	ՀՀ,ք.Ագարակ,Սահմանամերձ 11/2
[17] Լրացուցիչ տվյալներ	

Ապրանքներ ձեռք բերող անձի

[18] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0 9 4 2 5 3 7 8
[19] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀՀ իրավաբանական անձի հիմնարկ
[20] Բանկային տվյալները	ՀՀ ֆինանսների նախարարություն կենտ. գանձ. N 900305081177
[21] Գտնվելու վայրը (հասցեն)	ՄԵՂՐԻ Զ.ԱՆԴՐԱՆԻԿԻ 2
[22] Լրացուցիչ տվյալներ	
[23] Ում միջոցով	Անուն, ազգանուն
	Լիազորագիր: Համար
	Լիազորագիր: Ամսաթիվ
[24] Ապրանքների մատակարարման (առաքման) եղանակը	
[25] Մատակարարվող (առաքվող) ապրանքների նշանակման վայրը (հասցեն)	ՄԵՂՐԻ Զ.ԱՆԴՐԱՆԻԿԻ 2

[26] Մատակարարվող ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N	Ապրանքի անվանումը	Չափման միավորը	Քանակը	Միավորի գինը	Արժեքը	ԱԱՀ դրույքաչափը (%)	ԱԱՀ գումար	Ընդամենը	Այդ թվում՝ բնապ. վճար
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	Մետաղական խողովակ Փ114*3մմ	մ	1500	2916.67	4375000.01	20	875000	5250000.01	0
Ընդամենը					4375000.01	X	874999.99	5250000	0

Դուրս գրող՝ HAYRAPETYAN HAYK 2001750080
անունը, ազգանունը

26/09/2017 16:48:10

Ստացող՝ AVETISYAN ANNA 6010710464
անունը, ազգանունը

26/09/2017 16:52:18

Հավելված N 3
«8» օգոստոսի 2017թ. կնքված
ՍՄ-ՄՀ-ԳՀԱՊՁԲ-17/02-2 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ
«Վիլլա Գազ» ՍՊԸ
ՀՀ Սյունիքի մարզ, ք. Ագարակ, Չարենցի 26/24
Հայբիզնեսբանկ ՓԲԸ
Հ/Հ 1150010831830100
ՀՎՀՀ 09704975

Պատվիրատու
Մեղրի համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Մեղրի, Հ. Անդրանիկի 2
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900302200051
ՀՎՀՀ 09425378

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«26» «սեպտեմբեր» 2017թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ Մեղրի համայնքի կարիքների համար ապրանքների մատակարարաման պայմանագիր
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «8» «օգոստոս» 2017 թ.
Պայմանագրի համարը՝ ՍՄ-ՄՀ-ԳՀԱՊՁԲ-17/02-2
Պատվիրատուն՝ ի դեմս համայնքի ղեկավար Մ. Զաքարյանի և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս տնօրեն Հ. Հայրապետյանի, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «26» «սեպտեմբեր» 2017 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N 2 եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		
1	մետաղական խողովակ	Φ=114*3մմ	1500	1500	30.09.2017	26.09.2017	5250.0	սեպտեմբեր
	Ընդամենը						5250.0	

Վերոհիշյալ մատակարարումների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց
ստորագրություն
Հ. Հայրապետյան
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ապրանքն ընդունեց
ստորագրություն
Մ. Զաքարյան
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 3.1
«8» օգոստոսի 2017թ. կնքված
ՍՄ-ՄՀ-ԳՀԱՊՁԲ-17/02-2 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N 2
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ Մեղրիի համայնքապետարանի-ի (այսուհետ՝ Գնորդ) և «Վիլլա Գազ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 2017թ. Օգոստոսի 8-ին կնքված N ՍՄ-ՄՀ-ԳՀԱՇՁԲ-17/02-2 պայմանագրի շրջանակներում Վաճառողը 2017թ. սեպտեմբերի 26-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)
մետաղական խողովակ	մ	1500

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

Հ. Հայրապետյան
ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

Ա. Արզումանյան
ազգանուն, անուն

ստորագրություն

Վճարմ. հանձնարարական 170927000005030 - 660 Տպված 26/09/17 05:53:26

Բանկ << ֆինանսների նախարարություն "Client-Treasury" համակարգով

Ամսաթիվ 27/09/17 (7715)

Վճարողի հաշիվ	900302200051	Գումարը
Բանկի անվանումը	AM90030 Մեղրիի տեղական գանձ. բաժանմունք	5,250,000.00 AMD 5,250,000.00 AMD
Անունը կամ անվանումը	Մեղրու համայնք Մեղրիի Արտաքին լուս ավ. ցանցի հիմնա	
Հարկային կոդ		
Ստացողի հաշիվ	1150010831830100	
Ստացողի բանկը	AM11500 «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ	
Ստացող	«ՎԻԼԼԱ ԳԱԶ» ՍՊԸ	
Գումարը տառերով	Հինգ միլիոն երկու հարյուր հիսուն հազար AMD 00	
Նպատակը	Նյութերի ձեռքբերում համաձայն հ/հ Ա1 168454545	
Ստորագրություն 1		Ստորագրություն 2

Entered : Confirmed

Հոդված	Գումարը
4269	5,250,000.00